



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



5044

Նս մի անգամ լսեցի զբաղարանի զբրի խօսակ-  
ցութիւնը փոքրիկ երեխայի հետ և զբր ատայ.

Գիրքն ասում էր երեխային. «Սիրելի մանուկ,  
խնդրում եմ ինձ չվերցնես կեղտոտ ձեռքերով, ես  
սաստիկ կամաչեմ, երբ ուրիշ երեխաներ ինձ մտքուր  
չանան: Մի թող ինձ անձրևի տակ, չէ՞ որ գրքերը  
նոյնպէս փոքրիկ երեխաների նման հեշտութեամբ կը-  
մբռնեն: Ինձ վրայ չգրեն կամ նշան չանես ոչ գրչով  
և ոչ մատիտով, դա շատ ազեղ է: Կարգալիս էլ ար-  
մունկդ մի գնիր երեսին, սաստիկ ցաւեցնում ես. նոյն-  
պէս բաց մի ձգիր ինձ երեսին վրայ, քեզ էլ դուր չի  
գայ, երբ նոյն ձեռով հետո վարենք ուրիշները:

Թերթերիս մէջ մի գնիր ոչ մատիտ և ոչ էլ որ  
և է հաստ իր՝ բացի բարակ թղթերից, որովհետեւ դը-  
րանից կը փչանայ իմ կողմը:

Եթէ կարգալց վերջացրել ես և վախենում ես  
կարգացած տեղը կորցնել, եղունակներով նշաններ մի  
անիր, այլ պահիր իմ մէջ մի թուղթ կամ գեղեցիկ  
ժայգաւէն, ծածկիր ինձ և գիր նախկին տեղս: Մի մո-  
ռանար, որ քեզանից յետոյ ես գեւ շատ երեխաների  
էլ պիտի այցելեմ:

Օգնիր ինձ մնալ մտքուր և գեղեցիկ:

Իսկ ես կ'օգնեմ քեզ լինել երջանիկ:

Իր ամբուսին սիկին Նունե Բալանթարի լիցանակին **30 MAY 1911**

14444

ՀԱՅՐԱՊԵՏ ԶԱՆԱՆԹԱՐԻՑ



ՌՈՒՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

ՅՕՄՏՐՕՄ

# ՌՈՒՐԷՆԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ

891.71 Մ 4γ  
Բ-87

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Թարգմ. ռուսերէնից

1002  
6893



Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏԳԱՐԱՆ»

1904

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 14 февраля 1904 года.

„Путкинская Скоропечатня.“ Лештуковъ, 4.




### ՌՈՒԲԷՆԻ ՉԻՆ

**Ռ**ուբէնը մի փայտէ ձի ունի, նրա անու-  
նը Սիրունիկ է: Սյնքան մեծ է նա, որ  
Ռուբէնը կարող է հեծնել: Սիրունիկը  
երկար սև պոչ ունի և սև բաշ. մէջ-  
քին թամբ է կապած, որից կախ են աս-  
պանդակները, իսկ բերնումը սանձ կայ:  
Ռուբէնը շատ է սիրում իւր Սիրու-  
նիկին:

Ի Ն Չ Պ Է Ս Է Ռ Ո Ւ Բ Է Ն Ը Չ Ի - Չ Ի  
Խ Ա Ղ Ո Ւ Մ

Ահա Ռուբէնը հեծաւ իւր ձին, ոտներն էլ  
ասպանդակների մէջ գրեց. «էյ, առաջ գնա՛, Սի-  
րունիկ, վազիր», ասում է Ռուբէնը. իբրև թէ ձի

նստած ուզում է դաշտ գնալ: Սիրունիկն էլ ծուլացել է չի ուզում շարժուել: Ռուբէնը մտրակով խփում է նրան և քշում: «Բաւական է, Սիրունիկն




նիկն արդէն յոգնեց», մտածում է Ռուբէնը, «ժամանակ է տուն վերադառնալու». նա իջնում է ձիուց, թամբը վերցնում մի անկիւն դնում, իսկ ձին տանում մսուրի առաջ կապում, յետոյ նրա համար խոտ ու գարի է բերում և մի փոքր զոյլով էլ ջուր:

Ե Ռ Ս Զ Ի Կ Ա Ք Ռ

Ռուբէնը աթոռներէց կառք շինեց, յետոյ մի կտոր թոկ վերցրեց և իւր Սիրունիկին լծեց: Սիրունիկի առաջն էլ աթոռ դրեց, այդ աթոռի առաջ էլ մի ուրիշ աթոռ: Այսպէս նա երեք ձի

լծեց և սկսեց քշել, իբր թէ քաղաք է գնում: Նրա մտրակը այնքան երկար է, որ բոլոր ձիե-



րին հասնում է: «Էյ, վազեցէք», ասում է նա և մտրակով խփում:

Թ Ղ Թ Է Մ Ա Ր Դ Ի Կ


Ռուբէնը վերցրեց մկրատը և սկսեց թղթից մարդ կտրատել: Ի՜նչ մեծ գլուխ ունի նրա



կտրած մարդը, երկար ոտներ, իսկ ձեռները բոլորովին կարճ են: Նա թղթից շատ մարդիկ կտրատեց և յետոյ սկսեց նրանց համար տուն շինել:

### ՌՈՒԲԷՆԸ ՏՈՒՆ Է ԶԻՆՈՒՄ

Ռուբէնը վերցրեց աղիւսաձև փայտիկներ և սկսեց թղթէ տիկնիկների համար տուն շինել:



Մի շարք փայտիկներ ներքևը դարսեց, այս կըլինի հիմքը. յետոյ երկրորդ շարքը դարսեց, իսկ երրորդ շարքը դարսելիս՝ գունների և լուսամուտների համար բացուածքներ թողեց: Դրա վրայ էլ զգուշութեամբ մի շարք փայտիկներ դարսեց, իսկ կտուրի փոխարէն փայտէ արկղիկի խուփը դրեց վերեւից: Մնում էր ծխնելոյզը շինել: Նա մտածեց և տեսաւ, որ մայրիկի մատնոցը յարմար կըլինի ծխնելոյզի համար, վերցրեց և դրեց:

Տունն արդէն պատրաստ էր: Ռուբէնը իւր տիկնիկները նստացրեց տնակի մէջ:

### ՌՈՒԲԷՆԻ ԿՍՈՍՊՍՆԸ

Մայրիկը մկրատով սպիտակ կտորից մի մեծ տիկնիկ ձևեց, յետոյ կարեց և բամբակով լցրեց, բրդից տիկնիկի համար մազեր, բեխեր և




մօրուք շինեց, իսկ երեսը նկարեց: Յետոյ նրա համար գլխարկ ու զգեստ կարեց: Այդ տիկնիկը Ռուբէնի կառապանն էր. Ռուբէնը նրա անունը Օնիկ դրեց:

### ՌՈՒԲԷՆԻ ԶՈՒՆԸ

Ռուբէնը մի լաւ շուն ունի. նրա մազերը բրդոտ ու փափուկ են: Նա ապրում է դուրսը—

բագում շինած տնակի մէջ: Այս շունը Ռուբէնին շատ է սիրում: Հէնց որ Ռուբէնը դուրս է գալիս բազը, շունը վագում է նրա մօտ և ուզում



է ուղղակի երեսը լիզել: Զբօսներու գնալիս, շունը միշտ Ռուբէնի կողքից է գնում: Ռուբէնը գցում է իւր ձեռնափայտը և հրամայում, որ բերէ, նա իսկոյն վագ է տալիս և բերանով բերում է:

### ՌՈՒԲԷՆԻ ՓԻՍՕՆ

Ռուբէնը կատու էլ ունի. նրա մորթին մօխրագոյն է և մուգ շերտաւոր: Առաւօտները, հէնց որ Ռուբէնը զարթնում է, փիսօն գալիս բարձրանում է նրա մահճակալի վրայ և մռմռում. Ռուբէնը խաղում է նրա հետ—գցում է գնդակը, իսկ փիսօն վագում է գնդակի յետևից և թա-

թով բռնում: Ճաշի ժամանակ բարձրանում է Ռուբէնի աթուռի վրայ և նրա կողքին նստում: Ռուբէնը պատառաքաղով մի կտոր միս է վերց-



նում և մօտեցնում բերանին, որ ուտէ, բայց ուշքը ուրիշ բանի է դարձնում, այդ ժամանակ փիսօն իսկոյն թաթիկով խփում է, միսը գցում յատակին, ինքն էլ իջնում և ուտում. Ռուբէնը նայում ու ծիծաղում է:

### ՓՈՔՐԻԿ ԱՏԱՂՁԱԳՈՐԾԸ

Հայրիկն ընծայեց Ռուբէնին ատաղձագործական գործիքներ. այժմս նա ունի սղոց, ռանդա, գչիր (բուրդու) և մուրճ: Ռուբէնը շատ է սիրում ատաղձագործութեամբ զբաղուել: Ահա նա մի տախտակ ճարեց, բայց տախտակը հարթ չէ, նա վերցրեց ռանդան և սկսեց ռանդել:




տախտակը մաքրուեց և հարթուեց: Յետոյ սղոցով կէս արեց և մէկ տախտակի փոխարէն երկու տախտակ ունեցաւ. տախտակներից մէկը



գշիբով երկու տեղից ծակեց և այդ ծակերից թոկ անցկացրեց. այս նրա սահնակն է: Սիրունիկին էլ կըլծէ և կըբշէ:

ԹՄԿՍՐԴ

Ռուբէնի հայրիկը մուկ բռնելու համար երկաթէ լարերից շինած մի թակարդ գնեց, որ



երկու դուռ ունէր. դռները բարձրանում էին և կեռ երկաթի վերևի ծայրին դէմ ընկնում, իսկ ներքևի ծայրից քաշ էին անում մի կտոր ճարպ: Թակարդը դրին մառանը, որտեղ մկներ շատ կային: Մկնիկը զգաց ճարպի հոտը, մտաւ թակարդի մէջ, որ ուտէ, բայց հէնց որ կծեց ճարպը՝ կեռը շարժուեց, թակարդը չըխկ, փակուեց: Մկնիկն այս ու այն կողմն էր վազվզում թակարդի մէջ, բայց չէր կարողանում ազատուել:

ՌՌԻԲԷՆԻ ՀԻԻՐԵՐԸ

Մի անգամ Ռուբէնի մօտ եկաւ նրա ընկերունին՝ Լուսիկը խաղալու. տիկնիկն էլ հետն



էր վերցրել: Լուսիկի տիկնիկը շատ մեծ էր, գլուխը կարտօծնից էր շինած և մի քիչ ճեղքուած էր. բայց այդ չէր երևում, որովհետև գլը

խարկ ունէր ծածկած. նա հազին ունէր մի գեղեցիկ բրդեայ կարմիր գգեստ և թաւշեայ սև վերնագգեստ, այդ տիկնիկի անունը նազիկ էր: Երեխաները նազիկին նստացրին Օնիկի կողքին նրստարանի վրայ և սկսեցին ուրախ-ուրախ խաղալ: Ռուբէնը իւր փոքրիկ ինքնաեռի մէջ տաք ջուր ածեց, մայրիկն էլ փոքրիկ թէյնոցի մէջ քիչ թէյ գցեց, կաթնամանում կաթ ածեց, շաքարամանն էլ շաքարով լցրեց և տուեց երեխաներին: Լուսիկը սփռոցի տեղ սեղանի վրայ մի մաքուր անձեռոցիկ փռեց և թէյի ամանները դարսեց, իսկ Ռուբէնը տնքալով ինքնաեռը բերեց դրեց սեղանի վրայ: Նրանք առաջ նազիկին և Օնիկին խմացրին, յետոյ իրանք սկսեցին խմել:

### ԽԻՍՏ ՌԻՍՈՒՅԻՉԸ

Ռուբէնը թղթից ակնոցներ կտրեց դրեց աչքերին, իսկ Լուսիկն երեք գիրք վերցրեց,



մէկը իւր առաջը դրեց, միւսը նազիկի և երրորդը Օնիկի: «Նայեցէք այս ա է» ասաց Ռուբէնը. «ասացէք ա, որն է ա-ն»: Աշակերտները չգիտէին որն է ա-ն: Ուսուցիչը բարկացաւ և բղաւեց նրանց վրայ: Ինչ խիստ ուսուցիչ է:



### ԿՍՏՈՒԻ ԵՐԳԸ

Սհա եկաւ Ռուբէնի կատուն, քսմուռեց Ռուբէնին, մէջքը կորացրեց և սկսեց մլաւել. յետոյ բարձրացաւ երեխաների սեղանի վրայ և ամանները ցրիւ տուեց: «Սպասի՛ր, չար փիսօ, ասացին երեխաները, մենք էլ ուրիշ խաղ կը խաղանք»: Նրանք բռնեցին նազիկի ու Օնիկի ձեռներից, շրջան կազմեցին և սկսեցին երգել.

Թաղտի վրայ մեր փիսօն  
Մլաւում է ու երգում,  
Թաթիկներով լուացում:


Հէնց որ գիշերն է հասնում,  
Պատերազմ է նա գնում.  
Արիւնահեղ կռիւներում  
Բոլոր մկներին յաղթում  
Եւ փսռքով վերադառնում:

Իսկ կատուն նստած շրջանի մէջտեղը թա-  
թիկներն էր լիզում. նա երկար ժամանակ  
նայեց երեխաներին և յանկարծ դուրս ցատկեց  
փախաւ:

---

#### ՄՈՒԿՆ ՈՒ ԿՍՏՈՒՆ

Կատուն գնաց ու նստեց պահարանի մօտ,  
կամացուկ վիզը երկարացրեց ու նայեց պահա-



րանի տակը, ուր յատակի մէջ ծակ կար: Նա  
սուր հոտառութիւն ունի. զգաց մկների հոտը,  
լսեց նոյնպէս նրանց քթքթոցը և էլ չհեռացաւ  
այնտեղից. երկար ժամանակ նստած սպասում

էր: Յանկարծ դուրս պրծաւ մի փոքրիկ մկնիկ:  
Կատուն ցատկեց և բռնեց նրան: Մուկը ցաւից  
ծւծւում էր, խեղճ: Կատուն տարաւ նրան մի  
փոքր հեռու և բաց թողեց: Մկնիկն ուզեց փախ-  
չել, բայց փխսօն դարձեալ վրայ հասաւ և բռն-  
եց: Կատուն շատ է սիրում մկան հետ խաղալ:  
Այս խաղը նրա համար զուարճութիւն է, բայց  
մկանը ցաւ է պատճառում: Դրա համար էլ  
ասել են «կատուին խաղ է, մկանը մահ»:

Երբ կատուն խաղից բաւական կշտացաւ,  
կերաւ մկանը: Յետոյ ուրախ-ուրախ նստեց և  
սկսեց թաթիկները լիզել, երեսը լուանալ: Փի-  
սօն մաքրութիւն շատ է սիրում:

---

#### ՈՒՂԻԿԸ

Մի անգամ էլ հայրիկը Ռուբէնի համար մի  
փոքրիկ ուլիկ գնեց: Ի՞նչ գեղեցիկ ուլիկ է, ինքը



սև՝ սպիտակ բծերով, դունչը փոքրիկ, գլխի մագերի մէջ էլ արդէն երևում էին փոքրիկ պոզերը: Ուլիկը բոլորովին չէր վախենում մարդկանցից՝ վազվզում էր բոլոր սենեակներում, բարձրանում էր աթոռների, գահաւորակի ու սեղանների վրայ: Երբ Ռուբէնը վազում էր, նա էլ վազ էր տալիս յետեիցը և յանկարծ ցատկում: Ռուբէնը տեսնելով այդ՝ ծիծաղում էր:

**ԻՆՉՊԷՍ ԷԻՆ ԿԵՐԱԿՐՈՒՄ ՈՒԼԻԿԻՆ**

Ուլիկը դեռ չէր կարողանում խոտ ուտել. նրա ատամները շատ փոքր էին. խոհարար-




բունի Մարիամը նրան կաթով էր կերակրում: Երբեմն էլ Մարիամը մատն էր դնում ուլիկի բերանը, իսկ ուլիկը կարծելով՝ թէ մօր պտուկըն է, սկսում էր ծծել: Մարիամը մատը դնում էր կաթով լի ամանի մէջ, իսկ ուլիկը մատից

ծծում էր կաթը: Նա շատ սիրեց Մարիամին. հէնց որ նրան տեսնում էր, մօտ էր վազում, մկկում և թռչում նրա ծնկների վրայ:

ԹԻԹԵՑԻ X

Մայրիկի սենեակում ծաղկամաններով ծաղիկներ կային. մի անգամ բաց լուսամուտից ներս թռաւ մի գեղեցիկ թիթեռ: Նա ուրախ ուրախ թռչկոտում էր ծաղկից ծաղիկ. ահա ծա-



1.002  
6899

ղիկներից մէկի վրայ կանգնեց և թևերը ծալեց: Գուցէ քնեց թիթեռը, մտածեց Ռուբէնը և մօտեցաւ թիթեռին: Նա գլխի վրայ բեխեր ունի, որոնցով լսում և զգում է: Աչքեր ունի, որոնցով տեսնում է, իսկ բերնի փոխարէն կնճիթ ունի, որով ծաղիկների հիւթն է ծծում: Թիթեռը կարծես քնից զարթեց և իւր վեց ոտներով ծաղկի վրայ ման եկաւ, յետոյ բացեց թևերը և լուսամուտից դուրս թռաւ:

ՓԻՂԷԼՆ ԱԶԱՏՈՒՄ Է ՌՈՒԲԷՆԻՆ

Ռուբէնը իւր շան, Փիղէլի հետ գնաց այգի գրօսնելու. այնտեղ մօտեցաւ լճակին և սկըսեց քար ձգել նրա մէջ: Նա անպատճառ ուզում էր այնպէս գցել, ինչպէս հովուի տղան—Յանէսը: Յանէսի գցած քարը դիպչում էր ջրին, նորից բարձրանում, աւելի հեռուն ընկնում, դարձեալ




ջրին դիպչում և յետոյ միայն ջրի մէջ ընկղմւում: Բայց Ռուբէնը ոչ մի կերպ չէր կարողանում այնպէս գցել քարը, որ դիպչէր ջրին և հեռու գնար: Քարեր գցելով, Ռուբէնը աւելի ու աւելի մօտ գնաց ափին և յանկարծ սայթաքեց և ընկաւ ջրի մէջ: մի բռպէտում նա ամբողջ մարմնով ջրի տակն անցաւ: Փիղէլը հէնց որ այս տեսաւ, իսկոյն ցած թռաւ ջրի մէջ և ատամներով Ռուբէնի շապկից բռնեց, յետոյ լողալով մօտեցաւ

եզերքին ու Ռուբէնին դուրս քաշեց ափը: Եթէ Փիղէլը չլինէր, Ռուբէնը կըխեղդուէր:

ԹՈՒԹԱԿԸ

Ռուբէնի պապը մի թուլթակ ունի: Նա բոլորովին սպիտակ է և գլխի վրայ մի գեղեցիկ հոպոպիկ (կոլոթ) ունի. կտուցը մոխրագոյն է



կոռ և շատ պինդ, այնպէս որ եթէ նա ուզէնայ մէկին կտցահարել, սաստիկ ցաւ կըպատճառէ: Գիշերը նրան դնում են մեծ վանդակի մէջ, իսկ ցիւրեկը նա թառում է սիւնին ամրացրած փայտէ երկար ձողիկի վրայ: Պապը նրան խօսել է սովրեցրել: Հէնց որ Ռուբէնը դալիս է պապի մօտ հիւր, թուլթակը թևերը թափահարում է. գլուխ տալիս և կանչում. «Ռուբէն, Ռուբէն, թռռնիկ Ռուբէն, թուլթակը շաքար է ու-

զում: Այդ ժամանակ Ռուբէնը գրպանից շաքար է հանում տալիս և փաղաքշում նրան:


Չմեռը թուլթակը ձանձրանում է սենեակում, այդ պատճառով տաք օրերին պապը բաց է անում օդանցքը և այնտեղ նստացնում թուլթակին: Թուլթակը նստած հպարտ-հպարտ դուրս է նայում: Յանկարծ շունն սկսում է հաջել, թուլթակն էլ սկսում է իւր կապկուլթիւնը և շան պէս հաչում: Ռուբէնը ծիծաղից թուլանում է: Յետոյ աքաղաղն է կուկլուկու կանչում, թուլթակն էլ աքաղաղի նման կուկլուկու է անում, կովն է բառաչում, թուլթակն էլ նոյնն է անում: Թուլթակի ձայնն այնքան հաստ ու կոպիտ է, որ կարծես միշտ խզուած լինի: այդ պատճառով էլ շատ ծիծաղաշարժ են նրա հաչոցը, բառանչելը և կուկլուկուն: Ռուբէնը շարունակ ծիծաղում է, իսկ պապը յետ ու առաջ է գնում սենեակում, նայում Ռուբէնի և թուլթակի վրայ ու ժպտում:

---

#### ԿՅ.ՊԻԿ

Պապը մի փոքրիկ կապիկ էլ ունի, որի անունը Փակօ է: նրա մարմինը ծածկուած է փափուկ մազով, աչքերը փոքր, սև և աշխոյժ են: նա չորս ձեռք ունի: մատները նման են մար-

դու մատներին: դէմքով էլ կապիկը շատ նման է մարդուն: Փակօն շատ է սիրում Ռուբէնին, որովհետև Ռուբէնը նրա համար միշտ ընկոյզ է բերում: Հէնց որ Փակօն տեսնում է Ռուբէնին, իսկոյն վազում է մօտը և ձեռները նրա գրպան-



ներն է խոթում, այնտեղից ընկոյզ հանում և սկսում կոտրտել, իսկ պապը մատը թափ է տալիս և ասում. «ամօթ քեզ, Փակօ, ամօթ, որ գողութիւն ես անում»: Փակօն շուռ է գալիս միւս կողմը, որպէս թէ ոչինչ չի լսում և շարունակում է ընկոյզը կրծոտել:

---

#### ԺԱԿՕՆ ՃԱՂՈՒՄ Է

Երբ Ռուբէնը ճաշին պապի մօտ է լինում, Փակօն միշտ նրանց հետ է սեղան նստում: Ռուբէնի կողքին Փակօի համար մի բարձր աթոռ են դնում, որի վրայ բազմում է Փակօն: Պապը

Նրա կուրծքին մի անձեռոցիկ է կապում և ձեռքըն էլ գդալ է տալիս: Ժակօն ճարպիկ բռնում է գդալը և սկսում է արգանակ ուտել: այնպես լաւ է ուտում, որ երբէք անձեռոցիկի վրայ չի կաթեցնում: Յետոյ վերցնում է բաժակը և ձեռքը երկարացնում պապին. պապը նրա համար ջուր և գինի է ածում և նա խմում է: Ռու-




բէնն էլ իւր ափսէի միջից լաւ կտորները տալիս է նրան: Ժակօն շատ արագ է ուտում, կարծես վախենում է, թէ առաջիցը բաժինը կըխլին: Բերանը լցնում է կերակրով, այդ պատճառով և ճաշի վերջը նրա թշերը սաստիկ ուռած են լինում: Ռուբէնն առանց ծիծաղի էլ չի կարողանում ժակօին նայել և սկսում է քրքուալ: Ժակօն սաստիկ չարանում է և բարկութիւնից սկսում է ձեռքն ընկածը՝ գդալ, դանակ, պատառաքաղ յատակի վրայ շարտել: Պապը բարկա-

նում է նրա վրայ և ժակօն դարձեալ սկսում է ուտել:

ՉԻՍԻՈՐԸ

Պապը մի շուն էլ ունի, սպիտակ պուդէլ: Պուդէլի մազը խիտ և գանգուր է, կարծես ոչխարի բուրդ լինի: Նրա երկար ու խուզած պոչի ծայրին միայն մի փունջ մազ կայ: Ժակօն




շատ է սիրում պուդէլին և խաղում է նրա հետ: Հէնց որ պուդէլը վազում է, ժակօն հասնում է նրա յետևից, մերկ պոչից կախում, յետոյ ցատկում է նրա վրայ, մէջքին նստում ու հպարտ-հպարտ շուրջը նայում: Պապը վերցնում է ձեռնափայտը և ասում. «Թոխր»: Պուդէլը թռչում է փայտի վրայից, իսկ ժակօն քիչ է մնում որ ցած ընկնի և պինդ բռնում է Ֆիդէլի խիտ մա-

գերից: Պապը հրամայում է պուզէլին վազվզել  
ու թռչկոտել սենեակում, իսկ ժակօն նստած  
նրա մէջքին աւելի պինդ է բռնում նրա բրդոտ  
մազերից և ցած չի գլորւում: Ի՞նչ լաւ ձիաւոր  
է ժակօն:

### ՍԱՐԳ

Սենեակի մի մութ անկիւնում սարգը ու-




տայն գործեց: Ինչպիսի բարակ թելերից է շի-  
նած ոստայնը: Զգուշութեամբ քաշենք թելը:  
Թելերը քաշում են, բայց չեն կտրւում: Սարգը  
որտեղից է վերցնում այս թելերը: Նայիր, ահա  
և ինքը սարգը: Նա մոխրագոյն է և հաստլիկ,  
ուլթը ոտ ունի: Նա փորից դուրս թողեց մի բա-  
րակ, առաձգական թել և նրանից կախուեց: Ահա  
թէ որտիղից են այդ թելերը, սարգը իւր մար-

մնի մէջն է պատրաստում: Ահա նա բարձրա-  
ցաւ և ոստայնի վրայով սկսեց վազվզել: Բեր-  
նից կաշուն թելեր թողեց և մէկը միւսին ամ-  
րացրեց: Ոստայնն արդէն պատրաստ է: Սարգը  
պահուեց ճեղքի մէջ: Մէկ էլ տեսնես տըզ-տըզ  
տղտղալով թռաւ ճանճը, ոստայնը չնկատեց և  
մէջն ընկաւ: Նրա բարակ ոտները խճճուեցին  
կաշուն թելերի մէջ և նա սկսեց աւելի բարձր  
տղտղալ: Սարգը պահպանելով իւր մարմնից թե-  
լերը դուրս է թողնում և ճանճի շուրջը հիւսում,  
որ չկարողանայ ազատուել և յետոյ ծծում է  
նրա արիւնը: Ահա թէ սարգը ինչու համար է  
հիւսում ոստայնը:

### ՍԱՐԳԻ ԲՈՒՆԸ

Ահա դարձեալ մի ոստայն. սարգը չի երե-  
ւում, բայց մի անկիւնում ամրացրած է մի փո-  
քրիկ, սպիտակ, քնքոյշ գնդակ, որ կարծես






բամբակից լինի: Հէնց այդ է ոստայնը: Սարդը հիւսել է այդ ոստայնն իբրև բուն իւր ձագուկների համար: Գնդակի մէջտեղը նա զրել է իւր ձուիկները: Այս ձուիկներից դուրս կը գան փոքրիկ սարդեր: Պատուենք ոստայնը և նայենք: Ձագուկներն արդէն դուրս են եկել: Ո՛րքան մանր են նրանք և շատ. ահա ոստայնի այս ու այն կողմը ցրուեցին: Մինչև մեծանալը նրանք ոստայնի վրայ կապրեն, իսկ մեծանալուց յետոյ նրանցից ամեն մինը իւր համար ոստայն կը հիւսէ ձանձ և ուրիշ միջատներ որսալու համար:

### ԾԻՏԸ

Մի փոքրիկ մոխրագոյն թռչուն է թռչում.




Նրա մարմինը կլորիկ է, իսկ պոչը դեպի վեր ցցուած, գլուխը լայն, փետուրները զգզուած—

սա ծիտ է: Նա կտուցով ծղօտ է տանում: Ի՛նչ է անում ծղօտը: Հիմա գարուն է, նա ուզում է բուն շինել: Ահա ծիտը թռաւ եկաւ մեր լուսամուտի տակը կանգնեց. գլուխն այս ու այն կողմն է շարժում և չորս կողմը նայում, թէ արդեօք ապահով տեղ է: Յետոյ լուսամուտի տակ մի ճեղքի մէջ մտաւ: Մենք այդ ճեղքը չէինք նկատել, իսկ նա նկատել էր: Այնտեղ է շինում ծիտը իւր կլորիկ բունը: Երբ բունը պատրաստ կը լինի, նա փետուրներ ու աղուամազ կը հաւաքէ նրա մէջ, որ տաք լինի, յետոյ ձու կածէ և վրան կը նստի, որ տաքացնէ: Մի քանի օրից յետոյ ձուաններից մերկ թռչնիկներ դուրս կը գան: Նրանք բաց կանեն իրանց մեծ բերանները և կը ծուծան—մօրից կերակուր կը խնդրեն: Այն ժամանակ հայրն ու մայրը փոքրիկ միջատներ կը բերեն և կը կերակրեն նրանց:

### ՂԷԿԻԿՆ ՈՒ ՃՍՅԸ

Մսուրի առաջ կանգնած է մեր շիկագոյն կովը և խոտ է ուտում: Նրա մէջքին նստեց ճայր և սկսեց կտցահարել: Արդեօք ճայր շէկիկի մէջքը ցաւեցնում է: Ամենևին. նա հանգիստ կանգնած շարունակում է խոտ ուտել, իսկ ճայն անդադար կտցահարում է: Ահա թէ ինչու էի

ցաւում շէկիկի մէջքը: Այժմս դարուն է, իսկ  
 գարնանը բոլոր կովերի մազը թափւում է և  
 տեղը նոր մազ գալիս: Ճայերն էլ գարնանը  
 իրանց համար բուն են շինում: Նրանց մազ է




հարկաւոր, որ բնի մէջ ձագուկները համար տար  
 տեղ պատրաստեն: Նրանք գալիս են և կտցով  
 կովի մէջքի հին մազը պոկում: Ճայի հա-  
 մար էլ լաւ է կովին էլ դուրեկան, որովհետեւ  
 մազը փոխելու ժամանակ կովի կաշին քոր է  
 գալիս: Նա մինչև անգամ երբեմն մէջքը ցանկա-  
 պատերին է քսում, որ հին մազը թափուի: Ահա  
 ճայը մի փնջիկ կտցում բռնած թռաւ գնաց  
 իւր բունը:

**ԿԱՏՈՒՆ ԵՆ ՉՍԿՈՒԿՆԵՐԸ**

Ռուբէնի փիսօն վեց ձագ ունի: Նա իւր  
 ձագուկները հետ խոհանոցում վառարանի վրայ

է ապրում: Այսքան ձագուկներին կերակրելը  
 հեշտ չէ, դրա համար էլ նա սաստիկ լղարել է:  
 Քաղցած փիսօն վազվզում է այս ու այն կողմը,  
 իւր համար կերակուր ճարում, մուկ ու թռչնակ-  
 ներ բռնում, ուտում կշտանում, որ ձագուկնե-  
 րի համար կաթ ունենայ: Երբ կաթը շատա-  
 նում է, փիսօն գնում է խոհանոցը և վառարա-  
 րանի վրայ բարձրանում: Կոյր ձագուկները լսում  
 են նրա ձայնը, զգում են հոտը և սողալով



որոնում, գտնում են նրան: Կատուն պառկում  
 է կողքի վրայ, իսկ ձագուկները սկսում են ճրփ-  
 ճփացնելով կաթը ծծել: Կատուն բարձրացնում  
 է գլուխը և նրանց նայում: Երբ ձագուկները  
 կշտանում ու քնում են, փիսօն դարձեալ փախ-  
 չում գնում է իւր համար կերակուր ճարելու:  
 Ձագուկներն երբ փոքր ինչ մեծանում են, նրանց  
 աչքերը բացւում են: Կատուն սկսում է նրանց  
 հետը խաղալ, նրանց համար մկներ բերել և

քիչ-քիչ էլ սովորեցնում է մկներ բռնել: Իսկ երբ բուրբուկին մեծանան, այլևս չի կերակրի նրանց. ձագուկներն իրանց համար կերակուր կը-  
ճարեն:

### ՍՊԻՏԱԿ ՄՈՒԿԸ

Ռուբէնը մի մեծ մուկ ունէր: Նա բուրբուկին սպիտակ և փափուկ մագով էր ծածկուած, աչ-



քերը կարմիր էին, իսկ պոչը երկար ու մերկ: Առաջի թաթերը աւելի կարճ էին, քան յետեւին-  
ները: Նա ապրում էր արկղի մէջ, բուրբուկին ըն-  
տելացել էր և մարդուց չէր վախենում: Ռուբէնը  
մօտենում էր նրան, վերցնում, դնում սեղանի  
վրայ, որ վազվզէ: Երբ հաց էր տալիս, նա ա-  
ռաջի թաթերով վերցնում էր, մարդու նման մօ-  
տեցնում բերնին և իւր երկար ու սուր ատամ-  
ներով կրծում: Մուկը կատուի նման թաթիկ-

ներով լուացւում էր: Մի անգամ էլ իւր արկղի  
ծածկոցը կրծոտեց, դուրս եկաւ և սկսեց սե-  
նեակում վազվզել: Գիշերները դնում էին նրան  
բարձր պահարանի վրայ, բայց այնտեղ մկանը  
դուր չէր գալիս, ցած էր ցատկում պահարանի  
վրայից, բարձրանում մահճակալը և քնած մար-  
դու վրայով վազվզում: Ռուբէնը նրան շատ էր  
սիրում:

Ընտով մուկն սկսեց ամեն բան կրծոտել,  
մինչև անգամ սաւաններն ու վերմակները:  
Դուրս արին նրան ցուրտ մառանը և այնտեղից  
կորաւ: Երևի կատուն բռնեց կերաւ:

### ԱՐՏՈՒՏ.

Ամառը, երբ մարդ դաշտ է գնում, տես-



նում է որ խիտ խոտերի միջից դուրս է թռու-  
չում մի մոխրագոյն թռչուն: Դա արտուտն է:

Նա սաւառնում է վերև, շատ բարձր, թևերը թափ տալիս ու երգում: Ա՛խ, ինչպէս լաւ է երգում. այնքան բարձր է թռչում, որ հազիւ է երևում. իսկ նրա արծաթահնչիւն ձայնը դեռևս լսում է:

Արտուտը պէտք է ձագեր հանէ. բայց բուն չի շինում. դաշտում խոտերի մէջ նա մի փոքրիկ փոս գտաւ, նրա մէջ ձու ածեց և նրստեց:

Սյուպէս էգը—մայրը նստած էր ձուերի վրայ, իսկ արուն—հայրը թռչկոտում էր և իւր երգով նրան գուարճացնում: Չուաներից դուրս եկան փոքրիկ մերկ ձագուկներ: Հայրն ու մայրը կերակրում են նրանց և խնամում. անձրևի ժամանակ մայրը նստում է բնի վրայ և թևերով ձագուկներին ծածկում:

Արդէն հնձի ժամանակն եկաւ: Գաշտային ծաղիկները ծաղկեցին: Հնձուորներն եկան գերանդիները ձեռներին և սկսեցին բարձր խոտը հնձել: Մի ծեր հնձուոր կուացաւ և նրա աչքովն ընկաւ արտուտի բունը: Նա ձեռք չտուեց, խրդճաց ձագուկներին: Երբ հնձուորները գնացին, մայրն եկաւ և կերակրեց նրանց:

Ծեր հնձուորը նորից եկաւ նայելու բունը, արտուտը թևերը բացեց և թռաւ:

Ծերն սկսեց հսկել: Արտուտը վերադարձաւ


իւր ձագուկներին մօտ, բայց տեսաւ ծերուկին և չմօտեցաւ բնին, այլ յետ ու առաջ էր թռչում, որ խաբէ նրան: Բնի մօտով թռչելիս՝ նա թագուն մի միջատ դրեց ձագուկներից մէկի բերանը և թռաւ:

Ծերուկը ժպտաց ու գնաց հնձի:

ԿՈՎՆ ՈՒ ՀՈՐԹՔ

Մեր կովը մի հորթ ծնեց:

Հայրիկը գնաց հորթը տեսնելու, Ռուբէնն էլ նրա յետևից: Կովը կուացած՝ լիզում էր հորթուկին: Հորթուկը աշխատում էր բարձրանալ



կանգնել, բայց նրա ոտները թոյլ էին. հայրիկը բարձրացրեց կանգնեցրեց: Ծառաներն եկան, վերցրին հորթուկին ու տարան խրճիթը: Կովն սկսեց դէս դէն վազվզել, էլ խոտ չէր ուտում և

իւր հորթուկին էր որոնում: Նրան առանձին փակեցին:

Երեկոյեան Մարիամը վերցրեց կովկիթը և գնաց կովը կթելու: Նա նստեց կովի առաջ, կովկիթը դրեց կուրծքի տակ և սկսեց կթել: Փըշ-փըշ, թափոււմ էր կաթը կովկիթի մէջ. Մարիամը բաւական կթելուց յետոյ հորթուկին էլ բաժին թողեց, գնաց նրան բերեց և մնացածն էլ հորթուկը ծծեց:

Ի Ի Ղ

Մեր շէկիկը շատ կաթ է տալիս: Մարիամը կաթն ածում է ամանների մէջ և մառանում դարսում: Մի երկու օր յետոյ նա գնում է և




փայտէ գզալով զգուշութեամբ սերուցքը կաթի երեսից քաշում ածում երկար ու նեղ տակառի մէջ և տակառը ծածկում:

Տակառի ծածկոցի մէջտեղը ծակ կայ և այդ ծակից անց է կացրած մի երկար ու բարակ փայտ, որի ծայրին ամրացրած է շրջանաձև ծակ-ծակ տախտակ: Սա հնոցին է: Մարիամը երկար փայտի ծայրից բռնած՝ սկսեց վերև ներքև անել, սերուցքը հարել. երբ հարելը դժուարացաւ, նայեց և տեսաւ, որ կարագըն արդէն՝ պատրաստ է: Մարիամը հանեց կարագը, սառը ջրում լուաց և տուեց Ռուբէնին թէյի հետ ուտելու: Ռուբէնը սև հացով կերաւ կարագը և Մարիամին ու շէկիկին գովեց:

ԳԻԺ ԿՈՎԸ

Մեր սևուկը շատ գիժն է: Երբ ծառան մըսուրքի մէջ խոտ է ածում, սևուկը մօտենում կանգնում է մսուրի առաջ և ոչոքի էլ չի թողնում մօտ գնալու: Ըէկիկը մօտենում է, որ խոտ ուտէ, նա պոզերով վրայ է հասնում, շէկիկը վախենում, յետ է փախչում և դիպչում է սպիտակ կովին, սպիտակ չալին և այսպէս բոլոր կովերը սկսում են կռուել և միմեանց չեն թողնում, որ խոտ ուտեն: Երբեմն էլ սևուկը հեռուից երբ նկատում է, որ սպիտակ կովը մօտենում է խոտին, արագութեամբ վազում է և հարու տալիս ու այսպէս սկսում են կռուել:

Տէրը բարկացաւ սևուկի վրայ, նրա պոզերին տախտակ անցկացրեց և թոկով պինդ կապեց: Սևուկը պառաւիճան գլուխը կապած ման




էր գալիս և էլ գժութին չէր անում: Քանի որ նրա պոզերը կապած էին, ոչոք նրանից չէր վախենում:

ԽԵԼՕՔ ՁԻՆ

Մեր սպիտակ ձին տրդէն ծեր է. նա բոլորովին սպիտակ է, բայց գեռ բաւական լաւ է վազում: Չմեռը մենք նրան սահնակին ենք լրծում, սանձը բռնում և քշում: Նա թռչում է քամու արագութեամբ, բայց այնպէս խելօք է, որ հէնց՝ ասես թէ չէ տպու, իսկոյն կանգնում է:

Մէկ անգամ մենք զբօսնում էինք սահնակով: Մուլթն էր և ձին էր գալիս: Յանկարծ քամին փչեց և բուք բարձրացաւ: Մենք ճանա-

պարհը կորցրինք և չգիտէինք որ կողմը գնանք. միայն դաշտում քսմին պտոյտ էր տալիս ձիւնը:




Կառապանը սանձերը ձեռից գցեց և ասաց ձիուն. «ղէ՛հ, քեզ տեսնեմ, սիրելիս, գտիր ճանապարհը»: Ձին կանգ առաւ, մտածեց, հոտով իմացաւ, որ կողմից է փչում քամին, յետոյ կամաց տեղից շարժուեց և ճանապարհը շարունակեց: Գնաց-գնաց և մեզ տուն հասցրեց: Եթէ սպիտակ ձին չլինէր, մենք ստիպուած կըլինէինք դաշտում գիշերելու:

ՆԱԽՇՈՒՆԸ

Մեր ախոռում շատ ձիեր կան. նոքա միմեանց հետ հաշտ են ապրում, միևնոյն մսուրից խոտ ուտում, չեն կուտում և իրար չեն ծեծում: Երբ կարմիր ձիու մէջքը քոր գայ, նա իսկոյն

կրգնայ սև ձիու մօտ և կըսկսէ զգուշութեամբ նրա մէջքը ատամներով քորել: Սև ձին իսկոյն հասկանում է նրա ուզածը և իւր ատամներով բորում է կարմիր ձիու մէջքը: Բայց մենք ունենք և մի նախշուն ձի, որ շատ շարն է: Նա




սիրում է կռուել ու կծոտել: Բոլոր ձիերը նրանից փախչում են. դրա համար էլ, եթէ նրա վիզը կամ մէջքը քոր գայ և նա ցանկապատին քամուի, ոչոք նրան չի օգնի: Հէնց որ նա մէկին կամ միւսին մօտենայ, իսկոյն ամենքը յետ են քաշում, կարծելով թէ ուզում է կծել:

ՇՍ.Ռ.Ս.ՏՆ ՌԻ ՆՐՍ. ՔՌԻՌ.Ս.ԿԸ

Ըստատը մի քուռակ ծնեց. նա ախոռում կանգնած է, քուռակն էլ կողքին: Քուռակը քրնեց, իսկ շառատը հանդարտ կանգնած է և զգուշութեամբ է շարժում ոտները, որ չլինի թէ դիպ-


ցնէ ձագին և նրա քունը խանգարէ: Քուռակը զարթեց քնից, բարձրացաւ, կանգնեց իւր բարակ թոյլ ոտների վրայ, յետոյ մօտեցաւ մօրը և սկսեց նրա ծիծը փնտռել: Նա ուզում էր կաթ ծծել, բայց դեռ լաւ չգիտէր ինչպէս պէտք է պտուկները գտնել: Ըստատը կանգնած տեղից



չէր շարժում, շարունակում էր խոտ ուտել և քուռակին նայել: Վերջապէս քուռակը գտաւ սլրտուկները, ճպճպացրեց և ծծեց, իսկ շառատը քնքշութեամբ լիզում էր նրա մարմինը: Նա միայն կառապանին էր թողնում քուռակին մօտենալու, իսկ եթէ մի որեւէ անձանօթ մարդ մօտ գնար, իսկոյն կանգնում էր քուռակի առաջ և ծածկում նրան, որ չերևայ:


Երբ գարունն սկսուեց, շառատին ախոռից դուրս հանեցին: Նա չէր ուզում գնալ, նայում էր քուռակին, բարձր խրխնջում և կանչում նրան:

Քուռակը գնաց նրա յետևից, բայց վախենալով արևի պայծառ լոյսից, յետ վագեց գարձեալ մուլթ ախոռը: Չառատը նորից անհանգիստ խրր-խնչաց, իսկ քուռակը բարակ ձայնով պատաս-խանեց՝ ի՛ի՛ի: Նա դուրս ցատկեց ախոռից և վա-զեց մօր յետևից: Մայրն արածում էր դաշ-տում և նայում քուռակին, իսկ քուռակը թռչ-կոտում էր նրա շուրջը. երբ մի փոքր հեռանում էր, մայրը վագում էր յետևից և կանչում: Քու-ռակը վագում գալիս էր և սկսում կաթը ծծել, իսկ շառատը նրան լիզում էր:



Մէկ անգամ էլ, երբ արդէն դաշտերում խիտ ու հիւթալի խոտը բարձրացել էր, շառատն ու քուռակը միև ձիերի հետ գնացին արածելու: Մեծ ձիերը խոտ էին կրծոտում, իսկ քուռակ-ները վագվզում, իրար հետ խաղում, յետոյ մօ-տենում իրանց մօրը, կաթ ծծում և գարձեալ խաղում. երբ յոգնում էին, պառկում էին փա-

փուկ խոտի վրայ և քնում: Մայրերը հեռու չէին գնում և աչքերը նրանցից չէին հեռացնում:



Չառատի քուռակը մօտեցաւ նախշունին, իսկ նախշունը վրայ հասաւ և ատամներով բրնձեց: Չառատն այս ոչ տեսաւ, վագեց մի լաւ կծեց նախշունին, իսկ քուռակին իր մօտ կանչեց:

#### ՇԱՌԱՏՆ ՈՒ ԳՍՅԼԸ

Աշունը մօտենում էր. գիշերները աւելի եր-կարեցին ու մթնեցին. բոլոր քուռակներին գի-շերները իրանց մօր հետ քշում էին բակը և դռ-ները պինդ փակում: Մի գիշեր ախոռապանը բոլորին ներս արաւ բակը, իսկ շառատին մո-ռացաւ: Չառատը դաշտում, տանից ոչ շատ հե-ռու, ման էր գալիս, քուռակն էլ յետևից:

Այդ ժամանակ դաշտում սոված գայլը որս էր պտրտում. վագուց նա ոչինչ չէր կերել և



սովածութիւնից փորը վեց-վեց էր անում: Յանկարծ նա լսում է քուռակի թոյլ խրխնջոցը, կանգ առնում, օդը հոտոտում և վազում դէպի այն կողմը, որտեղ ման էր գալիս շառատը իւր քուռակի հետ: Նա դարանամուտ է լինում, մօտենում և արդէն իւր սուր աչքերով մթութեան մէջ լաւ տեսնում է քուռակին, ուզում է վրայ հասնել ու բռնել:




Չառատը զգաց, որ գայլը մօտենում է, օդը հոտոտեց և այնպէս խրխնջաց, որ քուռակն իսկոյն նրա մօտ վազեց: Չառատը կանգնեց քուռակի առաջ և քամակը դարձրեց գայլին: Որ կողմից էլ մօտենում էր գայլը, շառատը քամակըն այն կողմն էր դարձնում:

Գայլը բարկացաւ. նա մեծ ցանկութիւն ունէր քուռակն ուտելու, բայց չէր յաջողում: Վերջապէս նա ուղղակի մօտ գնաց, որ բռնէ,

իսկ շառատն այնպէս քացի տուեց, որ գայլի աչքերը մթնեցին: Այսպէս գայլը շատ պտոյտ եկաւ ձիու շուրջը, բայց տեսնելով, որ ոչինչ չի կարող անել, թողեց գնաց անտառը:

ՔՈՒՌԱԿԸ ԾԾԻՑ ԿՏՐԵՑԻՆ

Աշնանը, կալի ժամանակ շառատին պէտք է լծէին կալսող մեքենային, այդ պատճառով քուռակը ծծից կտրեցին և միւս քուռակների հետ գցեցին ախոռը. նրանց առաջը գարի և խոտ ածեցին:




Չառատը միւս ձիերի հետ կալսող մեքենային լծած՝ աշխատում էր, եթէ նրանցից մէկը մի փոքր ծուլանաւր, բանւորը իսկոյն մտրակով հասցնում էր:

Չառատը կաշուից դուրս էր գալիս:

Սհա նրանց քանդեցին և խոտ տուին ուտելու, բայց քաղցած շառատը չի ուտում, շուրջն է նայում, ականջ դնում: Ֆանկարծ նա խրխրնչաց. ախոռից էլ քուռակը բարակ ձայնով արձագանք տուեց: Չառատը կտրեց սանձը և դէպի ախոռը փախաւ: Նա սկսեց վազվզել ախոռի շուրջը, այս ու այն կողմն ընկնել, անհանգիստ ու խղճալի ձայնով խրխնջալ: Քուռակն էլ ախոռից էր խրխնջում: Հազիւ կարողացան շառատին բռնել և հեռացնել ախոռից, որ նա չլսէ քուռակի ձայնը:

ՇՍ.Ռ.ՍՏԸ ՃՍ.ՆՍ.ՁՌԻՄ Է ԻՐ ՉՍԳԸ

Հետևեալ տարին շառատը դարձեալ մի քուռակ ծնեց: Նա ջոկի մէջ իւր քուռակի հետ դաշ-




տում արածում էր: Սյնտեղ վազվզում էր և նրա անցեալ տարուայ քուռակը: Չառատը երբ տե-

սաւ նրան, սկսեց հոտոտել: Հոտոտեց, հոտոտեց յետոյ լիզեց ու սկսեց քորել նրա մէջքը: Քուռակն էլ սկսեց իր մօրը քամսուել: Թէև ձմեռուայ ընթացքում նա մոռացել էր մօրը, բայց այժմ յանկարծ յիշեց, գտաւ նրա պտուկները և սկսեց ծծել: Մի կողմից փոքրիկ քուռակն էր ծծում, միւս կողմից միւսը, իսկ մայրը հանդարտ կանգնած՝ մէկին է նայում, միւսին. մէկի մէջքը լիզում ու քորում, յետոյ միւսինը: Երևի մայրը ճանաչեց իւր ձագը:

ԻՇՈՒԿԸ


Ռուբէնը կարծում է, թէ ինքը արդէն բոլորովին մեծացել է և ուզում է հայրիկի պէս ձի նստել, բայց հայրիկը չի թողնում:



Երբ Ռուբէնը շատ խնդրեց, հայրիկը նրա համար մի իշուկ գնեց: Ռուբէնը ուրախութիւնից վազվզում էր իշուկի շուրջը, բղաւում, ծափ տա-

լիս: Ինչ ծիծաղելի է իշուկը: Սմբողջ մարմինը մոխրագոյն, իսկ մէջքի երկարութեամբ մուգ շերտինքը փոքրիկ, բարակ և կճղակներով, ինչպէս ձին, պոչը կովի պոչի պէս, իսկ գլուխը նոյնպէս ձիու գլխի է նման: Ձիերը տարան ջրելու. նրանք երբ տեսան իշուկին, երկիւղից մի կողմ նետուեցին: Իշուկի մէջքին փոքրիկ ասպանդակներով թամբ դրին և Ռուբէնը նստեց իշուկի վրայ: Նա բռնեց սանձը որ քշէ, բայց էջը տեղից չէր շարժուում: Ռուբէնը մտրակով խփեց, մայրիկն էլ քամակից քշեց, բայց էջը չէր շարժուում, կարծես տեղն ու տեղը կպել էր, բայց յետոյ յանկարծ այնպէս վազեց, որ Ռուբէնը հագիւ կարողացաւ նստած մնալ: Իշուկը եկաւ ախոռի դռան անաջը, յետևի ոտներով սկսեց քացի տալ և այնքան արեց, որ Ռուբէնին իւր գլխի վրայով ցած թուցրեց: Բայց Ռուբէնը չվնասուեց, որովհետև իշուկը ցածը է: Այսպէս յամառ շմուսց իշուկը: Կառապան Սարգիսը նստեց նրա մէջքին և այնպէս պինդ խփեց նրան մտրակով, որ յետևի ոտներով ցատկեց, բայց Սարգիսին իհարկէ, չկարողացաւ վայր գցել: Յատկոտեց, ցատկոտեց և ճարը կտրած՝ վերջապէս վազ տուեց: Այդ ժամանակուանից նա այնպէս խելօքացաւ, որ Ռուբէնն էլ արդէն կարողանում էր հեծնել:

Գայլը սաստիկ քաղցած էր, երբ գիշերը վրայ հասաւ. նա վաղ տուեց դէպի փարախը և սկսեց հոտոտել, որ մի բան գտնի լափելու: Նա լսեց փարախից գառնուկի մայիւնը, կանգ առաւ, նայեց, հոտոտեց, յետոյ կռացաւ նստեց և սկսեց փարախի պատի տակ հողը փորել: Իւր սուր շանկուերով արագ արագ այնպիսի մեծ ծակ փորեց, որ ինքը ազատ կարող էր մտնել:




Այնտեղից սողալով նա ներս գնաց և ոչխարների վրայ յարձակուեց: Ոչխարները վախեցած վեր թռան և փարախի միւս կողմը վազեցին: Գայլը ոչխարներից մէկին բռնեց կոկորդից ու խեղդեց իսկոյն, յետոյ յարձակուեց միւսի վրայ, նոյնպէս խեղդեց, ապա երրորդին: Միւսները մի անկիւն սեղմուած՝ վախից ու երկիւղից գողում էին: Քաղցած գայլն էլ նստեց խեղդուած ոչխարի մօտ

և սկսեց նրա փորձութիւնը ուտել: Յանկարծ նա մի խշխշոց լսեց. երևի մարդ է գալիս, զգաց նա, գառանը թողեց և գլուխը բարձրացրեց: Դռան փականքը չխկաց: Հովիւը եկաւ տեսնելու, թէ ինչո՞ւ ոչխարներն այդպէս ճշում են: Դայն իսկոյն դուրս թուաւ իւր փորած ծակի միջով և փախաւ դաշտը: Բայց շները նրա հոտն առան և սկսեցին ոռնալ:

### Թէ ԻՆՉՊԷՍ ԳԱՅԼԻՆ ՍՊԱՆԵՑԻՆ

Գիշերով հովիւը ոչինչ չնկատեց, բայց երբ առաւօտը դարձեալ եկաւ ու տեսաւ գայլի խեղճած ոչխարները, ծնկներին խփեց և վազեց տի-



րոջ մօտ: Տէրը շատ ափսոսաց և պատուիրեց կառապան Սարգսին, որ հսկէ գայլին: Սարգիսը գիշերները հրացանը ձեռին նստած՝ սպասում

էր գայլին, բայց նա չէր գալիս. գայլը զգոյշ կենդանի է:

Մի անգամ հովիւը յանկարծ սկսեց գոռալ. «գայլը, գայլը»:

Միւս բոլոր հովիւները բան ու գործ թողած՝ որը կացին վերցրեց, որը փոցիս, որը հրացան և վազ տուին լճակի ափը, որտեղ գայլը եղնինների յետեւ թագնուած՝ հետևում է՞ սագերին, որ բռնէ լափէ:

Մարդիկը ամեն կողմից շրջապատեցին նրան. նա խելագարի պէս այս ու այն կողմն էր ընկնում. աջ էր գնում, փոցխով էին վրայ հասնում, ձախ էր գնում, հրացան արձակում, այդ բաւական չէր, շներն էլ սկսեցին հաշոցով մօտ վազել: Բանուորներն ու շները աւելի ու աւելի մօտեցան գայլին. նա այդ ժամանակ նետուեց լրհակի մէջ և միայն դունչը դուրսը թողեց, որ շունչ քաշէ: Նստած սառը ջրի մէջ՝ ցրտից դողում էր: Սարգիսը հրացանը լցրեց և գայլի դընչին նշան դնելով՝ արձակեց ու վիրաւորեց:

Դայն այդ ժամանակ գլուխն ամբողջովին դուրս հանեց: Հովիւներն էլ հէնց այդ էին ուզում: Նրանք սաստիկ բարկացած էին գայլի վրայ, իսկոյն ջուրը մտան և փոցխերով նրան սպանեցին: Յետոյ դուրս քաշեցին, մորթին մաշկեցին և իրանց համար գլխարկներ շինեցին:

Աղուէսը սովորութիւն էր արել զիւրից հաւեր բռնելու: Նա զայլից աւելի խորամանկ ու զգոյշ է: Թագուն մտնում է զիւրացիների բակը, բարձրանում գոմի յարդեայ կտուրը և սկսում յարդը յետ անել: Այնտեղից իջնում է կտուրի տակ, որտեղ հաւերը թառած են լինում: Նա խեղդում է հաւերին, քանիսին որ ոյժը կը պատի և յետոյ մէկին ատամներով բռնելով՝ նոյն ծակից դուրս գալիս, կտուրից ցած ցատկում և դաշտը փախչում:



Այնտեղ մի ձորակ կայ. այդ ձորակում գտնուում է աղուէսի բունը, իսկ բնում չորս հատ փոքր աղուէսներ կան, դրանք խորամանկ աղուէսի ձագուկներն են: Նա հաւը բերում է և ձագուկներին ուտացնում: Ձագուկներն ուտում կշտանում և ուրախանում են:

Գիւրացիք գիշերները հսկում էին աղուէսին, բայց չկարողացան բռնել: Աղուէսը հասկացաւ, որ իրան հետևում են, աւելի զգուշացաւ: Գիւրացու բարկութիւնը եկաւ, նրանք գնացին որսորդի մօտ: Որսորդը վերցրեց իւր դանակը, ձնատեց, շներին կանչեց ու գնաց դաշտը աղուէսին որոնելու:



Ամբողջ օրը որսորդը ման եկաւ, բայց չը գտաւ աղուէսին: Միւս օրն էլ գնաց և դաշտում տեսաւ, որ աղուէսը վազվզում է: Նա կանչեց շներին և ձին քշեց: Իսկ շները տեսնելով աղուէսին, նրա յետևից ընկան: Աղուէսը վազում է, շները նոյնպէս: Ըներն արդէն մօտ էին և հէնց այն էր պէտք է բռնէին, աղուէսը խորամանկութեամբ շների քթի տակ պոչը թափ-տուեց և վազեց միւս կողմը: Ըները շուռ եկան նրա

կողմը, բայց արդէն ուշ էր, աղուէսը բաւական հեռու էր: Դարձեալ շները վազ տուին, իսկ նրանց յետևից էլ որսորդը: Նա բղաւում էր շների վրայ և կանչում: Երկար ժամանակ վազում էր աղուէսը, ինքն էլ ուժից ընկաւ, շներին էլ յոգնեցրեց, բայց շները վերջը հասան նրան, բռնեցին և ըսկսեցին զզգզել: Որսորդն իսկոյն մօտ վազեց, իւր որսորդական մեծ դանակով սպանեց նրան և գեղեցիկ ու բրդոտ մորթին հանեց:

Ա Ք Ի Ս

Առաւօտը Մարիամը մտաւ հաւաքունը, որ հաւերին կուտ տայ, բայց ինչ, տեսաւ որ տասր հաւ խեղդուած ընկած են: Մարիամը սար-



սափից ձեռներն իրար խփեց, ափսոսաց: Նա կարծում էր, թէ այդ խորամանկ աղուէսիբանն է, բայց երբ տեսաւ, որ բոլոր հաւերի գլուխ-

ներն է կրծոտած և ուղեղը կերած, հասկացաւ, որ դա անքիտն է արել և գնաց տիրոջը յայտնելու: Տէրը սկսեց նրա բունը որոնել և հաւաքունից քիչ հեռու, տան տակին գտան, դոյլերով ջուր բերին, բնի մէջ ածեցին: Բունը բոլորովին ջրով լցուեց և արիան էլ չէր կարողանում շունչ քաշել: Նա գլուխը դուրս հանեց և շուրջը նայեց, իսկ մարդիկ թագնուեցին: Նա բնից դուրս եկաւ թէ չէ, գլխին երկաթէ ձողով հասցրին, բայց չկարողացան սպանել, որովհետև գանգի ոսկորները շատ պինդ են: Աքիսը ուզում էր վարձեալ բունը մտնել, բայց բունը ջրով լիքն էր: Ճարը կտրած այս ու այն կողմն էր վազվզում, իսկ մարդիկ խփում էին, վերջապէս սպանեցին: Ինչ գեղեցիկ կենդանի է, երկար մարմին ունի, կարճ թաթիկներ, փափուկ մազ, բրդոտ պոչ և սև դունչ՝ շուրջը սպիտակ, իսկ ատամները այնքան երկար ու սուր են, որ նրա համար շատ հեշտ է հաւի գլուխը կրծոտել: Նրա մորթուց թանկագին մուշտակներ են շինում:

Ո Ձ Ն Ի

Ռուբէնի հայրիկը մի անգամ ձիով գնաց զաշտը, շունն էլ՝ Բողարը յետևից վազեց: Ճանապարհին հայրիկը տեսաւ որ Բողարը կանգնել

է և ինչ որ ուզում է բռնել: Նա կառքից դուրս եկաւ և տեսաւ, որ Բողարը բարկացած գլուխըն աջ ու ձախ է շարժում, թուրքը բերանից հոսում է, իսկ ոտների մօտ մի փշոտ գնդակ է ընկած: Այդ ոգնի է, մտածեց հայրիկը: Բողարը տեսնելով իւր տիրոջը, դարձեալ յարձակուեց ոգնու վրայ, բերանը բաց արեց, բռնեց նրան, բայց այնպէս փշերը ծակեցին նրա




լեզուն ու ծնօտները, որ Բողարը սաստիկ ունոցով յետ ցատկեց: Հայրիկը մտրակով ոգնուն գլորեց թաշկինակի մէջ, կապեց և տարաւ տուն Թուրքին ցոյց տալու:

Ճանապարհին ոգնին հանգիստ պառկած էր յետոյ նա ձանձրացաւ պառկելուց, իւր սրածայր դունչը դուրս հանեց թաշկինակից և կտրոք ու սև հուլունքի նման աչքերով շուրջը նայեց: Բայց հէնց որ հայրիկը շարժում էր, նա դարձեալ

գլուխը պահում ու փշոտ գնդակ էր դառնում: Երբ նա տեսաւ, որ հայրիկը նրան ձեռ չի տալիս, գլուխն ամբողջովին դուրս հանեց թաշկինակի միջից, ինքն էլ քիչ քիչ սկսեց դուրս սողալ, բայց հայրիկը թաշկինակը պինդ կապեց, որ ոգնին չկարողանայ դուրս գալ:

ԻՆՉՊԷՍ ԷՐ ԱՊՐՈՒՄ ՈՋՆԻՆ ՍԵՆԵՍԱԿՈՒՄ

Հայրիկը տուն բերեց ոգնին և տուեց Ռուբէնին: Ռուբէնը շատ ուրախացաւ: Նա իսկոյն փոքրիկ սփսէով կտրեց ու հաց բերեց, նրա համար. բայց ոգնին կծկուած պառկած էր: Յետոյ



գրը տեսաւ, որ ոչոք իրան չի նեղացնում, փշերի տակից գլուխը դուրս հանեց, ինքն էլ քիչ քիչ բացուեց, երկարացաւ և վերջապէս մերկ պոչն ու պինդ շանկուերով թաթիկներն երևացին:

Թըխկ-թըխկ, չանկուերը յատակին խփելով վազ տուեց ողնին և գահաւորակի տակը թագնուեց: Ըուտով նա ընտելացաւ և մարդ տեսնելիս էլ չէր կծկուում: Ամբողջ օրը գահաւորակի տակն էր մնում, բայց հէնց որ մթնում էր, դուրս էր գալիս և սենեակներում արագ արագ վազվզում: Ըատ անգամ վազում և մայրիկի գուլպան ատամներով բռնում էր, երբեմն էլ մինչև անգամ ոտը ցաւեցնում:

Մայրիկը բռնում էր նրան փոքրի տակից և դնում ծնկներին: Ողնին շուրջն էր նայում, յետոյ կծկուում և ծնկներից ցած գլորւում: Նրա համար ափսէով կաթ էին պատրաստում և հում միս: Նա միսը ուտում էր, կաթը խմում և դարձեալ վազվզում: Յետոյ մի կտոր թուղթ էր գլտնում, ատամներով քաշ տալիս գահաւորակի տակ և թղթի տակ պառկում քնում:

#### ՈՉԻՍՐԸ

Արդէն երեկոյ է. արևը մայր է մտնում: Հեռուից լսում է կովերի բառաչիւնը, ոչխարների մայիւնը ու հովուի մտրակի շրխկոցը: Ահա կովերը կուրծքերը կաթով լի՝ տուն վերադարձան. նրանք բառաչում են և խնդրում, որ շուտով կրթեն: Ահա և ոչխարները, նրանց քշում է հովուի

որդին՝ Յանկսը: Ամենից առաջ վազ է տալիս մի ոչխար, նրա յետեից բոլոր մնացածները: Ուր որ վազ տայ առաջնորդը, միւսներն էլ այնտեղ են վազ տալիս: Առաջնորդը ցատկեց փայտէ ձողի վրայից, միւսներն էլ ցատկեցին. փայտը վերցրին, բայց ոչխարները դատարկ տեղն էլ դարձեալ ցատկում են. սրբան յիմար կենդանի է ոչխարը: Նա երկար ու փափուկ բուրդ ունի, իսկ խոյը (ղոջը) մեծ ու ոլորուն եղջիւրներ: Ահա և



փոքրիկ գառնուկները վազվզում են իրանց մայրիկների մօտ. սրբան գեղեցիկ են նրանք, նրանց բուրդը կարճ ու գանգուր է: Խեղճ գառնուկներն աղերսալի ձայնով մայում են և ծծել են ուզում: Մի սպիտակ փոքրիկ գառնուկ եկաւ մօր մօտ, չորեց առաջի ոտների վրայ և սկսեց մօր կուրծքը ծծել: Երևի նրան այս բանը շատ էր դուր գալիս, նա ուրախութիւնից դմակն աջ ու ձախ էր շարժում:



Խուզելու ժամանակը հասաւ. ոչխարներին քշեցին փոքրիկ գետակի մէջ, որ նրանց բուրդը լուացուի, մաքրուի, յետոյ դուրս հանեցին և թողին գարնանային տաք արևի տակ, որ ցամաքին: Երբ ցամաքեցին, տարան նրանց բակը: Այնտեղ կանայք արդէն մեծ մեծ մկրատները ձեռներին սպասում էին: Ոչխարներին սկսեցին մէկ-մէկ բռնել, ոտները կապել և գետին գլո-



րել, իսկ կանայք նստում էին նրանց մօտ, խուզում նրանց փափուկ ու տաք բուրդը և մերկացնում: Եթէ չխուզէին էլ, միևնոյն է, ամառը նրանց բուրդը ինքն իրան կըթափուէր և տեղը նորը կըգար: Ոչխարի բուրդը լուանում են, չորացնում, զգում, թել մանում և թելից գուլպայ գործում: Նոյն թելից ոստայնանկի վրայ բրդէ կտորներ են գործում և զգեստ կարում: Ոչխա-

րի բրդից նոյնպէս շինում են թաղիք և թաղիքէ տաք կօշիկներ, իսկ գործարաններում պատրաստում են թանկագին մահուդներ և բրդէ կտորներ:

Երբ ոչխարը մորթում են միսն ուտելու համար, մորթուց էլ տաք մուշտակ են կարում:

Թէև ոչխարը շատ յիմար կենդանի է, բայց մարդու համար շատ օգտակար է: Եթէ նա չլինէր, մարդիկ ձմեռը ցրտից կըմըսէին:

Ո Ի Ղ Տ:

Մի անգամ Ռուբէնն ու հայրիկը կառքով գնացին դաշտը գրօնելու: Յանկարծ ձին մի կողմ ընկաւ և այնպէս արագ վազեց, որ հայրիկը հազիւ կարողացաւ կանգնեցնել:

— Ինչո՞ւ ձին խրտնեց, հարցրեց Ռուբէնը:

— Ահա այս ուղտերից, որոնք դուրս եկան հէնց նրա հանդէպ, պատասխանեց հայրիկը:

Ռուբէնն երբէք ուղտ չէր տեսել: Նա խնդրեց հայրիկին, որ մի փոքր երկար կանգնեն, որպէսզի ինքը լաւ տեսնէ, թէ ի՞նչպիսի կենդանի է ուղտը: Հայրիկը կառքն այնպէս դարձրեց, որ ձին էլ չտեսնի ուղտերին և կանգնեցրեց: Բոլոր ուղտերը բռնաւորուած էին ցորենի պարկերով: Ի՞նչ տգեղ կենդանի է ուղտը: Վիզը ծուռ

ու երկար, գլուխը յետ ընկած, մէջքի վրայ երկու սապատ: Ո՛րքան երկար են նրա ոտները և ինչպէս անշնորք է փոխում: Բայց չնայելով այս բոլորին, ուղտը շատ ուժեղ է և լաւ աշխատում է:

— Ինչի համար են ուղտի սապատները, հարցրեց Ռուբէնը հայրիկին: Հայրն էլ նրան բացատրեց:



«Երբ ուղտը պարապ միայն ուտում է, սաստիկ գերանում է և նրա սապատների մէջ շատ ճարպ է հաւաքւում. այնուհետև նա կարողանում է երկար ժամանակ առանց սննդի մնալ, որովհետև այդ ճարպը արիւն է դառնում և սնունդ է տալիս նրա մարմնին: Նա երկար ժամանակ կարող է և առանց ջրի մնալ, որովհետև նրա ստամոքսը ունի առանձին խողոչներ, որոնց մէջ շատ ջուր է մտնում և նա այդ ջուրը պահում է անսպասելի ուժով իւր ծարաւը յազե-

ցնելու համար: Մեզանից շատ հեռու, տաք երկրում, որ Ափրիկէ է կոչւում, մի ընդարձակ անապատ կայ: Այդ անապատում բացի աւազից ոչինչ չկայ. ոչ բուսեղէն, ոչ կենդանի և ոչ էլ մարդ: Այդ անապատը Սահարա է կոչւում: Մարդիկ ուրիշ երկիրներ գնալու համար այդ անապատից պէտք է անցնեն: Ի՛նչո՞վ գնան. ձին շատ խոտ է ուզում, իսկ այնտեղ խոտ չկայ: Ահա այդպիսի տեղերում ուղտերն անհրաժեշտ են:



Երկար ժամանակ կերակրում են նրանց, մինչև որ սապատները ճարպով լցուեն, յետոյ սապատների վրայ բեռներ են կապում, բեռների վրայ էլ մարդիկ նստում և մեծ խմբով ճանապարհ են ընկնում. այսպիսի խմբերը քարվան են կոչւում: Ճանապարհին ուղտերին շատ քիչ են կերակրում, միայն մի գունդ խմոր են տալիս օրական: Օրե-


րով ու շաբաթներով քարվանք ճանապարհ է գնում, մինչև որ հասնում է օազիսը:

Օազիս կոչւում է անապատի այն կանաչազարդ մասը, որտեղ մի փոքրիկ աղբիւր կամ ջրհոր կայ, որի շրջակայքը ծածկուած են խոտով ու ծառերով-արմաւենիներով: Այստեղ քարվանքը հանգստանում է, ուղտերը կուշտ խոտ են ուտում, ջուր խմում և պապատներում դարձեալ ճարպ ամբարում:

Երբ նրանք արդէն լաւ հանգստացած են լինում, նրանց էլի բեռնաւորում են և քարվանք ճանապարհ է ընկնում:

### ՀԱՒՆ ՈՒ ՁՈՒՆ:

Ռուբէնի թութուշիկը կռկռում էր. նա մի



սպիտակ, մաքուր ձու ածեց հաւաքնում, յարդի մէջ: Մայրիկն ինքնատուր մէջ խաշեց այդ ձուն


և Ռուբէնը դեղնուցը կերաւ, իսկ սպիտակուցը թողեց, որովհետև չէր սիրում: Միւս օրը թութուշեկը դարձեալ ձու ածեց. Ռուբէնը ուրախանում էր, տեսնելով ամեն օր թարմ ձուեր, իսկ մայրիկը նրան ասաց:

— Չպէտք է բոլոր ձուերն ուտել, Ռուբէն, թութուշիկի համար էլ պէտք է պահել, յետոյ նա կուղենայ ճուտ հանել:

« Սյնուհետև Ռուբէնը ամեն օր գնում էր հաւաքուն, ձուն վերցնում և արկղում պահում:

### ԹՈՒԹՈՒՂԻԿԸ ԹՈՒՒՍ Է ՆՄՏՈՒՄ:

Ինչ որ տխուր էր երևում Ռուբէնի հաւը: Նա վերջին ձուն էլ ածեց և նստած տեղից էլ չէր վեր կենում: Մայրիկը կողովի մէջ յարդ



ածեց, յարդի վրայ դարսեց հաւաքած ձուերը և թութուշիկին էլ ձուերի վրայ նստեցրեց: Թու-

Թուշիկը բոլոր ժամանակը հանդիստ նստած էր ձուերի վրայ. միայն կուտ ուտելիս և ջուր խմելիս իջնում էր բնից, յետոյ դարձեալ բարձրանում ու կտցով ձուերը շուռ տալիս, էլի նստում:

— Ինչո՞ւ նա ձուերը շուռ է տալիս, հարցրեց Ռուբէնը:

«Որպէս զի բոլոր ձուերը հաւասարապէս տաքանան», պատասխանեց մայրիկը: «Հաւի մարմինը տաք է և նա իւր տաքութեամբ երբ տաքացնում է ձուերը, ձուերի մէջ եղած սաղմը սկսում է զարգանալ»:


— Ի՞նչ սաղմ, հարցրեց Ռուբէնը:

«Քու տեսել ես, որ ձուի մէջ դեղնուց կայ. երբ հաւը նստում է ձուի վրայ, նրա տաքութիւնից այդ դեղնուցքի մէջ արեան բիծ է գոյանում. այդ բծից ջլեր են տարածւում: Քանի գնում, աւելի ու աւելի է մեծանում այդ բիծը և յետոյ մերկ ճուտի նման է դառնում, ծածկւում է աղուսամազով և երեք շաբաթից յետոյ, երբ բոլորովին զարգանում է, կճեպի մէջ նրան նեղուածք է լինում, աշխատում է կճեպից դուրս գալ:

ԹՈՒԹՈՒՂԻԿԸ ԶՈՒՏ Է ՀՄՆՈՒՄ

Երեք շաբաթ շարունակ հաւը նստած էր ձուերի վրայ. խեղճը բոլորովին նիհարեց, կուրծ-

քի փետուրները թափուեցին և կուրծքը մերկացաւ: Մայրիկը դիտէր, թէ ճուտերը երբ պէտք է դուրս գան ձուերից. նա գնաց նայելու. հաւը արկղի միջից հանեց, յետոյ մի ձու վերցրեց և մօտեցրեց առաջ իւր ականջին, յետոյ էլ Ռուբէնի ականջին: Ռուբէնը ձուի միջից թըլակ-թխկոց լսեց: Նա ուրախութիւնից այնպէս ցատկեց, որ քիչ մնաց ձուն վայր պցէր: Մայրիկն



այդ ձուն ցած դրեց և բոլոր միւս ձուերը մէկ-մէկ ականջին մօտեցրեց: Մէկը մի քիչ արդէն ձեղբուած էր: Նա ձուերը դարսեց և թութուշիկին էլի նստացրեց:

Երեկոյեան մայրիկն ու Ռուբէնը դարձեալ գնացին նայելու: Ձեղքն աւելի մեծացել էր և մինչև անգամ բացուածք էր գոյացել, որի բարակ թաղանթի տակ մի բան շարժւում էր: Մայրիկը զգուշութեամբ թաղանթը պատրեց և Ռուբէնը

տեսաւ ճուտիկի փոքրիկ զեղին կտուցը, որի ծայրին մի պինդ գնդիկ կար: Այդ գնդիկով ճուտը ձուի պինդ կճեպը կոտորում, ծակում է:


Միւս առաւօտը, երբ Ռուբէնն ու մայրիկը դարձեալ եկան նայելու, արկղի մէջ արդէն ինչ որ ծւծւում էր. դա երեկուայ ճուտն էր, որ արդէն դուրս էր եկել և մարմինն էլ ցամաքել էր: Ռուբէնը ուրախութիւնից ճշաց: Ինչ գեղեցիկ էր ճուտիկը. նրա մարմինը ծածկուած էր աղուամագով, իսկ աչքերը սև էին:

Ռուբէնը վերցրեց ճուտիկը և դրեց գամբիւղի մէջ, որ նա թուլթուլիկին իւր ծւծուցով չխանդարէ մինչև վերջը ձուերի վրայ նստել: Մայրիկը գամբիւղը դրեց տաք տեղ: Միւս ձուերն էլ բոլորը համարեա ճեղքուած էին, իսկ մէկը բոլորովին կոտորուած էր և ճուտիկը շարժւում էր: Մայրիկը այդ ձուն վերցրեց. ճուտիկն ամբողջ մարմնով շարժուեց և մայրիկի ձեռքի մէջ ընկաւ: Այդ ճուտն էլ նրանք նստացրին գամբիւղի մէջ միւսի մօտ, «նա կը ցամաքի և այնքան սիրուն կը լինի, որքան առաջինը», ասաց մայրիկը:

### ՀԱՆՆ ՌԻ ԱՌԻՏԻԿՆԵՐԸ

Բոլոր ճուտիկները դուրս եկան ձուերից. մայրիկը նրանց դրեց արկղի մէջ թուլթուլիկի մօտ,


իսկ կճեպները դուրս ածեց: Ամեն օր Ռուբէնը գնում էր ճուտերին կերակրելու. նա ածում էր նրանց առաջը խաշած ցորեն և կանչում. ջ՛ն, ջ՛ն, ջ՛ն: Հաւն իսկոյն մօտենում էր և կտցով կը տկըտացնում, ցորենի հատիկները հաւաքում և միևնոյն ժամանակ ճուտիկներին նայում: Ատիկներն էլ մօրը նայելով՝ նոյնպէս իրանց փոքրիկ կտուցներով հաւաքում էին հատիկները:



Յետոյ Ռուբէնը ջուր էր բերում. ճուտիկները ջուրն էլ էին խմում: Ըստ ծիծաղելի է նրանց ջուր խմելը. կանգնում են ամանի ափին, կտցով ջուր վերցնում, յետոյ գլուխները վեր բարձրացնում և կուլ տալիս:

Հէնց որ նրանք ուտում-խմում կշտանում են, իսկոյն վազ են տալիս իրանց մօր մօտ: Հաւը նստում է գետնի վրայ, ճուտերն էլ մտնում են նրա թևերի տակ և տաքանում:


Երբ ճուտերը մի քիչ մեծացան, նրանց հաւի հետ դուրս թողին բակը, իսկ Ռուբէնը ճիպոտը ձեռին նստում էր դռանը և հսկում: Մի անգամ էլ հաւը իւր ճուտիկների հետ հանգիստ բախում ման էր դալիս արևի տակ, միջատներ էր բռնում ճուտիկներին ուտեցնում: «Յանկարծ Ռուբէնը



տեսաւ, որ հաւը անհանգիստ կերպով վազ է տալիս դէս-դէն, բարձրաձայն կռկռում է և փրւում: Ճուտիկներն էլ վախեցած նրա մօտն են վազում: Այդ ժամանակ մի ինչ որ ստուեր անցաւ նրանց վրայով: Ռուբէնը վերև նայեց և տեսաւ, որ մի մեծ ցին թռչնում է և աշխատում, որ ճուտիկներից մէկը փախցնէ: Ռուբէնը դուռաց և ձեռները շարժեց: Յինը վախեցաւ ու փախաւ:

Բակում ջրով լիքը մի մեծ տաշտ կար դրած: Ճուտերից մէկը բարձրացաւ տաշտի վրայ, որ ջուր խմէ. նա չկարողացաւ լաւ կանգնել, սլքուեց ու ընկաւ ջրի մէջ: Թրպրոտաց մի քիչ ջրի տակն անցաւ և խեղդուեց:

Կուտ տալու ժամանակ Ռուբէնը նկատեց, որ ճուտիկներից մէկը պակաս է, նա սկսեց փնտռել, բայց չգտաւ. մայրիկն ու Մարիամն էլ




ամեն տեղ նայեցին, բայց ճուտը ոչ մի տեղից դուրս չեկաւ:

Մարիամը ջուրը թափելիս՝ տեսաւ տաշտի մէջ խեղդուած ճուտը, վերցրեց ու տարաւ Ռուբէնի մօտ: Ճուտը ամբողջովին թրջուած էր, ոտները ձգած, աչքերը փակ և գլուխը մի կողմ ընկած: Ռուբէնը մատներով շփեց և տեսաւ, որ բոլորովին սառն է, շատ լաց եղաւ, որ ճուտիկը խեղդուել էր և զնաց մայրիկին հարցնելու, թէ ինչո՞ւ էր նա սատկել:

— Քո ճուտիկն ընկել է ջրի մէջ, ասաց մայրիկը, և նրա քիթն ու բերանը լցուել են ջրով, այնուհետև նա էլ չէ կարողացել շունչ քաշել: Բոլոր մարդիկ, կենդանիներն ու թռչուններն օդ են շնչում: Օդը նրանց քիթի ու բերանի միջով գնում է կուրծքը, թոքերը: Երբ օդը չի կարող գնալ թոքերի մէջ, մարդս մեռնում է: Քո ճուտիկի թոքերն էլ օդի փոխարէն ջրով են լցուել, ուստի նա խեղդուել է:

## Չ Կ Ն Ե Ր

Ռուբէնը նստած լճակի ափին՝ ջրի մէջ հացի փշրանքներ էր գցում և յետոյ սպասում, թէ



ինչ կըլինի: Յանկարծ ջրի միջից մի բերան երևաց, հացը խլեց ու անյետացաւ: Դա ծածան ձուկն էր: Լճակի մէջ ծածան շատ կայ: Երեկոյեան,

արևը մայր մտնելիս՝ նրանք ամբողջ խմբերով խայտում են ջրի մակերևոյթի մօտ:

Ահա ձկներից մէկը լող տուեց դէպի մակերևոյթը, ջրից դուրս ցատկեց և դարձեալ ընկաւ ջրի մէջ: Ռուբէնն էլի հաց գցեց և նայում է: Ջուրը թափանցիկ է և բաւական խորութեան լաւ երևում է: Ձկները խմբովին յարձակուեցին հացի փշրանքի վրայ և մէկը միւսից աշխատում էր խլել:

Լաւ զբաղմունք է ձկներին կերակրելը:

— Մայրիկ, ինչպէսէ որ ձկները չեն խեղդուում ջրի մէջ: Մի՞թէ նրանք շունչ չեն քաշում:


«Ձկները նոյնպէս շունչ են քաշում, պատասխանեց մայրիկը: Ջրի մէջ օդ կայ, բայց նրանք թոքեր չունեն, այլ քիմուխտներ: Այդ քիմուխտներով նրանք շունչ են քաշում ջրի մէջ: Եթէ ջրի միջից հանենք նրանց, կսատկեն, որովհետև չեն կարող առանց ջրի միայն օդով շունչ քաշել: Չուկը ջրային կենդանի է:

## ՉԿՆԵՐՆ ԻՆՉԳԷՄ ԵՆ ԲԱԶՄԱՆՈՒՄ

Ռուբէնն արդէն գիտէր, որ կովն ու ձին ձագերին կերակրում են իրանց կաթով և այդ պատճառով էլ կոչւում են կաթնասուն: Նա նոյն-

պէս գիտէր, որ հաւի ճուտերը դուրս են գալիս ձուերից և հաւը կաթով չի կերակրում նրանց, որովհետեւ նա և առհասարակ բոլոր թռչունները կաթ չունեն: ձուտիկները հենց որ ծնւում են, սկսում են իրանց մօր հետ կուտ ուտել:

Այժմ Ռուբէնը կամենում էր իմանալ, թէ ինչպէս են բազմանում ձկները և ինչով է մայրը նրանց կերակրում:



Ահա թէ ինչ պատմեց նրան մայրիկը:

— Չկան փորում անթիւ մանր ձուաներ կան: Երբ ժամանակը հասնում է և ձկան փորում այդ ձուաները պատրաստ են լինում, նա բոլորը թափում է ջրային խոտերի մէջ: Մի քանի ժամանակ ձուաները մնում են ջրի մէջ, յետոյ ամեն մի ձուիկից դուրս է գալիս մի-մի փոքրիկ ձուկ, որ հագիւ է երևում: Հէնց որ ձուկը ձուիկից դուրս է գալիս, նրան ոչոք չի կերա-

կրում, այլ ինքն ուտում է ջրային խոտ: Նա մեծանում է և ինքն էլ ձու դնում, որ ձուիկներից դարձեալ ձկներ դուրս գան:

### ԻՆՉՊԻՍ ԲՈՒՆԵՅԻՆ ԾԱԾԱՆԸ

Բանուոր Բարսեղը լճակում ուզեց ձուկ բռնել: Նա ուռնու ցախերից մի նեղ ու երկար զամբիւղ հիւսեց, մի կողմում փոքրիկ անցք թո-



ղեց, մէջը քարեր ածեց, որ ծանրանայ և մի կտոր էլ հաց դրեց ու դցեց լճակի մէջ: Միւս առաւօտն եկաւ զամբիւղը դուրս քաշեց և տեսաւ, որ մէջը շատ ձկներ են հաւաքուել: Բարսեղն ածեց այդ ձկները դոյլի մէջ և տարաւ խոհանոց, իսկ խոհարարուհին վերցրեց դանակը, նրանց փորը ճեղքեց և փորոտիքը հանեց: Ամեն մի ձկան փորից մի-մի փամփուշտ դուրս եկաւ: Ռուբէնը տեսնելով այդ փամփուշտ-



ները, վագեց մայրիկի մօտ և հարցրեց, թէ ինչ փամփուշտ է այդ:


— Եթէ ձուկն այդ փամփուշտը շունենայ, ասաց մայրիկը, նա չի կարողանայ լող տալ:

Փամփուշտը բաղկացած է երկու մասից և լցուած է օդով:

---

Գ Ո Ր Տ

Ռուբէնը նստած էր լողարանում. յանկարծ նկատեց, որ դէպի ջուրը տանող սանդուխքի



վրայ մի գորտ ցատկեց և թագնուեց. նրա մարմինը մուգ էր, ինչպէս սանդուխքի թաց փայտը, այդ պատճառով էլ աչքի չէր ընկնում, իսկ աչքերը դուրս ցցուած: Նա հանդիստ նստած՝ չէր էլ շարժուում: Ռուբէնը դարմացած նայում էր, թէ ինչո՞ւ գորտը այնտեղ բարձրացաւ և ինչ է ուզում անել: Զոգ օր էր. օդի մէջ անթիւ մոծակ-

ներ ու մլակներ էին թռչկոտում: Ահա սանդուխքի վրայ, գորտից ոչ հեռու մի մոծակ նստեց: Գորտը ցատկեց և իւր երկար լեզուով բռնեց նրան: Յետոյ դարձեալ սուս ու փուս թագնուեց և նայում է: Նրա մօտով շատ մոծակներ են թռչում, բայց նա տեղից չի շարժուում, կարծես յոյս էլ չունի բռնելու: Յանկարծ էլի ցատկեց և մլակին թռչելիս կլանեց: Ռուբէնը նոր հասկացաւ, թէ գորտը ինչո՞ւ էր սանդուխքի վրայ թագնուում:

Ռուբէնը ուզեց աւելի մօտիկից նայել գորտին և այդ պատճառով կամացուկ իջաւ սանդուխքով և այն է՝ ուզում էր բռնել, բայց գորտը համարեա ձեռքի միջից ցատկեց ընկաւ ջրի մէջ. Ռուբէնը միայն ինչ որ մի սառնութիւն զգաց ձեռքը գորտին զիպցնելիս: Հայրիկը բացատրեց, որ գորտը, ինչպէս և մի քանի ուրիշ կենդանիներ, մողէսը, կոկորդիլոսը և այլն, սառն արիւն ունի, այդ պատճառով նրա մարմինն էլ սառն է:


---

Չ Ե Ր Ե Փ Ո Ի Կ

Սաստիկ շոգ էր. մինչև անգամ ստուերում մարդ շոգից նեղանում էր: Ռուբէնի երեսը բոլորովին կարմրել էր և նա խոտի մէջ ձգուել պառկել էր. շոգից չէր էլ ուզում տեղից շարժուել:

—Ռուբէն, ձայն տուեց հայրիկը, — արի գնանք լճակը լողանալու, որ մի քիչ զովանանք:

Ռուբէնը հայրիկի հետ գնաց, շորերը հանեց և լողարանի սանդուխքով իջաւ օփը, որտեղ ջուրը ցանծաղ էր: Ո՛րքան լաւ էր և հով ջրի մէջ: Ռուբէնը խաղում էր օփին, իսկ հայրիկը մի փոքր հեռուն լողում էր: Երբ այս ու այն կողմն ընկնելուց ու բղաւելուց յոգնեց Ռուբէնը,



լուց և սկսեց ջուրը մի ձեռքից միւսի մէջ ածել: Յանկարծ նա նկատեց, որ ջրի մէջ փոքրիկ ձրկներ են լողում: Նրանց գլուխը շատ մեծ էր, իսկ պոչը բարակ և իրանք էլ կէս մատնաչափ երկարութեան:

—Այս ի՞նչ ձուկ է, հարցրեց նա հօրը:

—Դա ձուկ չէ, այլ շերեփուկ է, որ յետոյ գորտ կը դառնայ: Ջրից դուրս գանք և ես կը պատմեմ քեզ նրա մասին, ասաց հայրիկը:

## ՉԵՐԵՓՈՒԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ռուբէնը ջրից դուրս եկաւ, մարմինը ցամաքացրեց, շորերը հագաւ և նստեց լճակի օփին հայրիկի մօտ, իսկ հայրիկը սկսեց պատմել:

—Գորտն էլ, ինչպէս ձուկը, իւր ձուիկները թափում է ջրային խոտերի մէջ: այդ ձուիկները բոլորովին թափանցիկ են: Նրանցից շուտով դուրս են գալիս շատ աւելի մանր շերեփուկներ



քան սրանք են: Նրանց գլուխը շատ մեծ է լինում, մարմինը փոքր և պոչը բարակ: Չերեփուկները լողում են ջրի մէջ և ձկների նման, քիմուխտներով շունչ քաշում: Մի քանի ժամանակից յետոյ աճում են նրա յետևի ոտները, յետոյ առաջին ոտները, այդ ժամանակ կըծքումն էլ քիչ-քիչ թոքերն են կազմակերպւում, իսկ քիմուխտներն ընկնում: Պոչը նոյնպէս քիչ-քիչ փոքրանում է և յետոյ բոլորովին ընկնում: Չե-

ընդհանրապես գորտ է դառնում, դուրս գալիս ափը և խոտի փոխարէն սկսում է միջատներ ուտել, որոնց նա բաւական հեշտութեամբ է բնում, որովհետեւ լեզուն առաջին ծայրովն է կպած բերանին և դուրս հանելիս շուռ է գալիս ու ամբողջովին համարեա դուրս ընկնում: Այս ժամանակուանից նա սկսում է աւելի շատ ցամաքի վրայ ապրել, քան ջրումը, բայց նա էլի ջուր շատ է սիրում և ջրում լաւ լող է տալիս, այ տես:


Հէնց ջրի մօտ, ծառի փտած բնի վրայ նստած էր մի մեծ գորտ և իւր դուրս ընկած աչքերով նայում էր Ռուբէնին:

Նրա առաջին թաթիկները կարճ էին և շատ նման մարդու ձեռներին, իսկ յետեւիները աւելի երկար և լայն բաց արած: Ռուբէնն ուզում էր ճիպոտով բարձրացնել նրան, բայց գորտը մի ակնթարթում ցատկեց և ընկաւ ջրի մէջ:

### Մ Ր Զ Ն Ո Յ

Ռուբէնն այգում մի հողակոյտ գտաւ և սկսեց փայտով փորել: Հողի միջից դուրս եկան անթիւ մրջիններ և այս ու այն կողմը վազեցին: Նրանցից մի քանիսը սպիտակ երկար ձուաներ էին քարշ տալիս, որոնք համարեա թէ իրանց մե-

ծութեանն էին, միւսներն աւազ էին կրում, ծղնօտ, որն էլ մի կտոր փայտ էր տանում: Մի մրջին էլ ուզում էր մի կտոր հող տեղից շարժել, բայց հողն իրանից տասն անգամ մեծ էր. նրա ոյժը չէր պատում: Միւս մրջինները մօտ վազեցին օդնութեան և նրանց մէջ սաստիկ իրարանցում բարձրացաւ: Ամեն կողմից շրջա-




պատեցին այդ հողի կտորը և քարշ տուին տարան, որ մրջնոցի մուտքը փակեն: Ռուբէնը մինչև անգամ չնկատեց էլ, թէ ինչպէս նրանք սպիտակ ձուաները թագցրին մրջնոցի մէջ: Միւս օրը Ռուբէնը դարձեալ եկաւ մրջնոցը տեսնելու, բայց նա բոլորովին առաջուայ նման չէր, մրջիններն արդէն նորոգել էին:

### ԻՆՉՊԷՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ՄՐՋԻՆՆԵՐԸ

Ռուբէնը հայրիկին պատմեց այգում տեսած հողակոյտի և մրջինների մասին:

Գուցէ դու կարծուս ես, թէ դա մի փոքրիկ փոս է, որտեղ ածած է փայտի կտորներ, ծըղ-նօտ, հող և այլն: Ո՛չ, դա ահագին տուն է, մի քանի յարկանի, որ մրջիւնները շինել են իրանց համար: Այնտեղ նրանք մեծ-մեծ դահլիճներ ունեն, սրահներ և մանկանոցներ: Մըջնոցից դուրս տանող մի քանի անցքեր կան, որոնք վատ եզանակներին և գիշերները հողով ծած-



կում են, որ ոչ թշնամի կարողանայ ներս մտնել և ոչ էլ անձրևի ջուրը ներս թափուի:

—Մըջնոցում կան բանուոր մրջիւններ, որոնք տուն են շինում և երեխաներին նայում: Կան և գինուոր մրջիւններ, որոնք մըջնոցը պաշտպա-նում են ուրիշ թշնամի միջատներից: Մայր մրջիւնն էլ միայն ձու է ածում. շատ ծիծաղելի է այս մայր մրջիւնը: Նրա փորը շատ մեծ է. նա ոչինչ չի անում, միայն ուտում է և ձու

ածում: Երբ ձու դնելու ժամանակն հասնում է, մայր մրջիւնը դնում է մեծ դահլիճը և անթիւ մանր ձուաններ է ածում: Բանուորները վազում են նրա յետևից, ձուանները հաւաքում, իրանց թքով թրջում, որ ձուն լաւ զարգանայ և դահ-լիճի պատերին շարում: Զուտով այդ թափան-ցիկ ձուաններից փոքրիկ որդեր — թրթուրներ են դուրս գալիս. բանուորների մէջ դարձեալ խլրը-տում է բարձրանում. նրանք կերակրում են որ-դերին և կէսօրին, արևի տաք ժամանակը նրանց դուրս են տանում արևի տակ, ինչպէս որ մեր դայեակները երեխաներին տանում են զբօսանքի: Երբ որդերը մեծանում են, իրանց համար մե-տաքսէ բջիջ են գործում և նրանց մէջ մնում: Այդ ժամանակ նրանք հարսնեակ են կոչւում: Հարսնեակն էլ չի ուտում, միայն բանուոր մըր-ջիւններն ամեն օր նրանց տանում են արևի տակ զբօսնելու: Երբ հարսնեակը բջիջի մէջ ար-դէն մրջիւն է դառնում և պէտք է դուրս գայ, բանուորներն իրանց պինդ ծնօտներով բջիջը պատռում են և նրան դուրս հանում: Յետոյ բանուորներն ուղղում են նրանց բեխերն ու օա-ները և տանում արևի տակ, որ շուտով ցամա-քեն ու ամրանան:

Մրջիւններն իրանց համար կովեր էլ ունին: Ահա թէ ովքեր են նրանց կովերը:

Կանաչ խոտի կամ ծառերի տերևների վրայ  
գուցէ դու տեսած լինես փոքրիկ կանաչ միջատ.  
Նա բոլորովին տերևի գոյն ունի և հազիւ է  
նկատուում. նրա մարմինը հաստ ու կարճ է, ոտ-  
ները բարակ, բեխերը նոյնպէս կանաչ ու բա-  
րակ:

Նա փորից քաղցը հիւթ է դուրս թողնում,  
որը մրջիւնները շատ են սիրում: Նրանք կարո-  
ղանում են մինչև անգամ այդ միջատներին կթել,  
ինչպէս մենք կթում ենք կովերին: Նրանք իրանց  
առաջին թաթերով շփում են այդ միջատի մէջքը  
և հիւթը դուրս է գալիս: Մրջիւններն երբէք այդ  
միջատներին չեն վնասում, այլ ընդհակառակը  
տեղաւորում են իրանց մրջնանոցի մօտ և խնա-  
մում են նրանց:



«Ազգային գրադարան»



NL0387327

2828

